

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Նախագիծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

<<ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>>  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ>>

**Հոդված 1.** <<Ազգային անվտանգության մարմիններում ծառայության  
մասին>> Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 11-ի  
ՀՕ-532-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

- 1) 3-րդ մասում <<Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-  
թյան առաջարկությամբ>> բառերը փոխարինել <<վարչապետը>> բառով,
- 2) 4-րդ մասում <<Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-  
թյան առաջարկությամբ>> բառերը փոխարինել <<Կառավարությունը>>  
բառով:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում <<սպայական կոչումները շնոր-  
հում է Հայաստանի Հանրապետության Նախագահը>> բառերը փոխարինել  
<<զինվորական կոչումները շնորհում է Հայաստանի Հանրապետության  
Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի  
առաջարկությամբ>> բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրու-  
թյամբ.

<<2. Պետական լիազոր մարմնի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի  
նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչա-  
պետը:>>:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ և 6-րդ գլուխներն ուժի մեջ մտնելու օրվանից: